ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ

Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի տնօրեն Նարինե Սահակյան

Ասում են, որ Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցում «Փոքրիկ իշխան»-ի իմաստուն աղվեսի պատվիրանով են առաջնորդվում. «Դու պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես»: Սաները, դպրոցից հեռանալով, հաճախ են վերադառնում՝ հարազատ հարկի տակ իրենց հաղթանակների և պարտությունների մասին պատմելու: Նրանց հաղթանակները շատ են և ուրախացնող:

Վանաձորի թիվ 11 դպրոցը հիմնադրվել է 1954թ.: 2010թ. համալրել է ավագ դպրոցների շարքը: Դպրոցն սկզբում եղել է ռուսերենով ուսուցմամբ, հետո դարձել է ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ, այժմ կան նաև ռուսերենով ուսուցմամբ դասարաններ:

Ուսուցիչների թիվը 31 է: Նրանցից 19-ն ունեն առաջին տարակարգ, մեկը՝ երկրորդ: Մանկավարժներից 4-ը վերապատրաստողներ են:

«Ավագ դպրոցի առաջ մեծ պահանջներ են դրված, որոնք փորձում ենք իրականացնել: Միայն կրթություն տալը շատ քիչ է: Մենք կարող ենք տալ գիտելիք, բայց այդ գիտելիքը երեխան կյանքում չկարողանա օգտագործել: Դրա համար նոր ծրագիր ենք մշակել՝ պայմանավորված մասնագիտական կողմնորոշման հետ: Ուսումնասիրվում է աշխատաշուկան: Եվ լինում են դեպքեր, երբ աշակերտը փոխում է իր հոսքը կամ ենթահոսքը»,– տեղեկացրեց դպրոցի տնօրեն Նարինե Սահակյանը՝ ընդգծելով, որ հասարակությունը պետք է գիտակցի՝ ավագ դպրոց պետք է գնան սովորելու ցանկություն ունեցողները:

Հիմա դպրոցում սովորում է ավելի քան 350 աշակերտ: Սաների ունակությունները տնօրենին ուրախացնում ու հիացնում են: Պատմում է, որ երեխաներ ունեն, որոնք ժամանակակից տեխնոլոգիների մեծ վարպետ են դարձել՝ բառի իսկական իմաստով. «Խնդրի դեպքում ես մասնագետի դիմելու կարիք չունեմ: Իմ «անպիտանները» վերականգնում են, վերանորոգում: Շատ լավ երեխաներ կան»: Վստահ է, որ նրանք իրենց տեղը կգտնեն կյանքում:

Իսկ ահա ավագ դպրոցների ձախողման մասին բարձրաձայնողների հետ նա չի համաձայնում: «Եթե մենք ունենք այն արդյունքները, որոնք ունենք, ես չեմ կարող ասել, որ չի կայացել: Վստահ ու հանգիստ կարող եմ ասել՝ ավագ դպրոցը կայացել է: Ինչպե՞ս կարող են մեզ կանգնեցնել չաշխատող, չկայացած դպրոցի կողքին, նույն հարյան վրա ու ասել՝ չեն կայացել»,– ընդգծում է նա ու ասվածի ապացույց թվարկում իրենց ձեռքբերումները:

Վերջին հինգ տարիները կրթօջախի համար նշանավեցին հաջողությունների յուրահատուկ հաղթահանդեսներ՝ թե՛ միջազգային, թե՛ հանրապետական օլիմպիադաներում զանազան գիտաուսումնական մրցույթներում և ծրագրում սաներն արժանացան 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների, հատուկ մրցանակների, գովասանագրերի (թվում՝ ծրագիր և 195 մրցույթ):

ԳՊՄԻ-ի, ԵՊՀ-ի կողմից կազմակերպված օլիմպիադաներին կրթօջախը մեծ եռանդով և ակտիվությամբ մասնակցեց: Արդյունքում՝ առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմ, տասնյակից ավել դիպլոմ, գովասանագիր:

Ուշագրավ էր, որ սովորողները մեծ խանդավառությամբ մասնակցեցին Սանկտ Պետերբուրգի պետական հնգամյա սարանի՝ «Մաթեմատիկա», «Քիմիա» առարկաներից մակերպված օլիմպիադային՝ լուրջ և նշանակալի ձեռքբերումներ արձանագրելով: Դպրոցի 10 սան վերը նշված օլիմպիադայում արժանացավ հաղթողի պատվավոր կոչմանի:

Հուրախություն կրթօջախի մակավարժական կոլեկտիվի՝ սովորողները հաջողությամբ մասնակցել և մասնակցում են միջազգային օլիմպիադաների. ռուսաց լեզու՝ Լ. Անանյան (1-ին կարգի դիպլոմ, Մոսկվա), Կարապետ Իզաբելլա (1-ին կարգի դիպլոմ, Մոսկվա), Ջուլիետա Մասյան (3-րդ կարգի դիպլոմ, Մոսկվա): Դպրոցի երկուսն էլ դեկտեմբերի 4-9-ը Մոսկվայում մասնակցեց ռուսաց լեզվի միջազգային օլիմպիադային:

Ի դեպ, Կոլումբիայում՝ մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայում, 3-րդ կարգի դիպլոմի արժանացած Գևորգ Մնացականյանը (բրոնզե մեդալ) և Գայանե Բաբայանը հաջողությամբ մասնակցեցին Մոսկվայի տնտեսագիտական բարձրագույն դպրոց գիտահետազոտական համալսարանի՝ «Մաթեմատիկա» առարկայից կազմակերպած օլիմպիադային՝ արժանանալով 1-ին (Գ. Մնացականյան), 2-րդ (Գ. Բաբայան) կարգի դիպլոմների: 2013-2014 ուստարում Գ. Մնացականյանը մասնակցել է մաթեմատիկայի միջազգային օլիմպիադային՝ արժանանալով արծաթե մեդալի (Հարավաֆրիկյան Հանրապետություն):

Չափազանց ոգևորող արդյունքներ են արձանագրվել հանրապետական օլիմպիադայի փուլում. «Կենսաբանություն», «Պատմություն», «Ռուսաց լեզու», «Աշխարհագրություն», «Անգլերեն», «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «ՆԶՊ» առարկաներից 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ և գովասանագրեր. 1-ին կարգ՝ 3 աշակերտ, 2-րդ կարգ՝ 7 աշակերտ, 3-րդ կարգ՝ 15 աշակերտ, գովասանագիր՝ 11 աշակերտ:

Ի թիվս մի շարք հաջողությունների՝ տնօրենը նաեւ նշում է, որ ռուսաց լեզվի օլիմպիադայից հաղթող 9 աշակերտներն այս տարի ուսուցչի ուղեկցությամբ մեկնել են Ղրիմ, որտեղից էլ վերադարձել են նոր հաղթանակներով եւ ծեռքբերումներով:

Ի դեպ, կրթօջախի սովորողները Ս. Ավագյանի ղեկավարությամբ աննախադեպ հաջողությամբ հանդես եկան «Բանավեճի ակումբ»-ի հանրապետական խաղում՝ արժանանալով 1-ին կարգի դիպլոմի (ոսկե մեդալ):

Ա. Ս. Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցը միշտ աչքի է ընկել սպորտային նվաճումներով և հաղթանակներով: Այս հինգ ուսումնական տարիները ևս նշանավորեցին ակնառու հաջողություններով. կրթօջախի բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի թիմերը հանրապետական մարզային մրցաշարերում արձանագրեցին գերազանց արդյունքներ:

Հաջողություններին զուգահեռ՝ Նարինե Սահակյանը խոսեց նաեւ իր անհանգստության մասին: Պատճառը անհավասար մրցակցությունն է. առաջնությունը տրվում է աղջիկներին կից ավագ դպրոցներին: Ասում է. «Չեմ բողոքում, արդարապես ուզում եմ ասել, որ մյուս ավագ դպրոցները պետք է անտեսվեն: Հատկապես եթե ուզում են, որ ավագ դպրոցները կայանան, հավասար մրցակցություն պետք է լինի»:

Դպրոցների կայացման հարցում կարեւոր է նաեւ ծնողների մտածելակերպը: Սխալ է հույսը միայն կրկնուսույցի գործունեությունների վրա դնելը: Բայց, արի ու տես, որ դեռ աշակերտներ կան, որոնք շարունակում են դիմել կրկնուսույցներին: Նարինե Սահակյանը նկատում է, որ դրա դեմ պայքարել չեն կարող, որովհետեւ կարծրացած մոտեցում է դրա համար ժամանակ է պետք: Նա հավատացնում է, որ եթե դասին նստեն, աշխատեն, հանձնարարվածն անեն՝ այլեւ խնդիր չի լինի. «Նախորդ տարի 137 շրջանավարտից 42-ը բուհ են ընդունվել, 42-ը՝ անվճար հիմունքներով, մյուս տղոկոսը կրկնուսույցի չի դիմել»: Ընդունվել են ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի բուհեր: Եվ դա արդյունքն է նաեւ այն բանի, որ դպրոցում աշխատանքային պայմանները հագեցած են ինչպես մանկավարժական անձնակազմի, այնպես էլ աշակերտների համար: Սովորեցնելուն զուգահեռ՝ աշակերտներին նաեւ օգնում են հասկանալ՝ ինչ է պետք իրենց:

«Այսօր երեխաները ցայտնոտի մեջ են ընկնում: 14-15 տարեկանը չի կարող հասկանալ՝ իրեն ինչ է պետք. ինքն իրեն հասկանալ չի կարող: Պետք է օգնենք երեխաներին ճանաչել իրենց: Դա է կարեւոր: Այդ տարիքի երեխաների հետ աշխատելը շատ հետաքրքիր է: Երբ ինքը քեզնից սպասելիք ունի ու դու տալիս ես ակնկալվածը, դրանից մեծ հաճույք ու երջանկություն չկա»,– նկատում է Սահակյանն ու ավելացնում, որ երեխաներին միշտ խորհուրդ է տալիս հայերենից բացի ամենաքիչը երկու լեզու իմանալ: Մեկ լեզվի իմացությունը սահմանափակումներ է մտցնում:

Պակաս կարեւոր չէ նաեւ ՏՏ ոլորտը: Օրինակ՝ ռոբոտաշինության ոլորտում ընդգրկվելու մեծ ցանկություն կա, բայց պայմաններ չկան: Տնօրենը նկատում է, որ ռոբոտաշինության խմբակ չի գործում դպրոցում ազատ դասասենյակ չունենալու պատճառով: Աշակերտները բացը լրացնում են՝ հաճախելով Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն:

Բայց ուրախությամբ է տեղեկացնում, որ նյութատեխնիկական բազայի հետ կապված խնդիր չունեն. հիմնական և լուրջ խնդիրը շենքային պայմաններն են: